

ՀԱՉԱԿ

ՅՈՒԼԻՍ ՏԱՆԵԼԻՆԳԻ տարեգարձի առ-
թով Հնչակի սոյն համարին կցված է իրեն Յա-
ւելուած մի բրօշուր Զանկիւլեանի, Նալպանտեա-
նի և Ղուկուեանի պատկերներով հանդերձ։ Այդ բրօ-
շուրը կրում է հետեւեալ վերնագիրը. — «Տարեգարձ
1896 թ. Յուլիս Տանեհինգի, Յեղափոխական հերոսներ»։

ՅՈՒԼԻՍ ՏԱՆԵԼԻՆԳ 1890.

Յուլիս Տանեհինգ — դա մի նշանաւոր օր է, որի
արշաւոյը հրաժառ փայլով ծագեցաւ հայութեան վրայ.
դա մի նշանաւոր օր է, որ լուսացաւ և իր բուն
տաճնապով խոր ու անջնջելի ակօս թողեց հայոց պատ-
մութեան մէջ, դա մի նշանաւոր օր է, որի տարեգար-
ձը լրանում է սոյն ամսին, վերաէնդանացնելով յիշ-
ուութեան մէջ մեծ շարժման տեսարաններն իրենց յա-
փշտակիչ ոգով ու սարսափով և իրենց անմոռանալի
քաջ հերոսներով։

Ահա՛ նշանը։ Գում՝ Գափուի մայր եկեղեցու զան-
գակները զօղանջում են։ Ղօղանջում են նրանք, բայց
ս'չ աղօթքի կանչելով հաւատացեալներին։ Նրանք կա-
տարում են իրենց իսկական գերը. — նրանք յեղափո-
խական շարժումների կոչնակն են դարձում։ Սպառնա-
կան ու յանդուգն կերպարանքով հինգ հազար հայ
բաղմութիւնը խռնվում է եկեղեցու բակում ու նրա
չորջրէ Գոչիւն, Թղմուկ, Կտրճանակի ձայներ, ազա-
տական աղաղակներ թնդացնում են տաճիկ բռնակա-
լի մայրաքաղաքը։ Ահա՛ Զանկիւլեան հերոսն է, որ
ջարդում, ոտնակոխ է անում սուլթանի պատկերն ու
թուղբան։ Ահա՛ Նալպանտեան հերոսն է, որ կրակոտ
աչքով արտասանում է նշանաւոր տառապանութիւնը՝
ծածկված բիւրաւորների կեցցէներով ու ծափահարու-
թիւններով։ Ահա՛ Նազարէթ, Յովհաննէս և միւս հե-
րոսներն են, որ առիւծի պէս յարձակվում են թշնա-
մու վրայ... Պայթում է կռիւը, սարսափելի, բայց
սո՛րբ կռիւ ընդդէմ բռնութեան ազատութեան համար...

Էւ հայութիւնը խրտուեցաւ, ոգի առաւ ու կեն-
դանացաւ։

Աննկարագրելի է այն յափշտակութիւնը, այն ոգեւո-

րութիւնը, այն կենդանի իրարանցումը, որ այդ մեծ
օրին յաջորդող երկար շաբաթների ընթացքում տի-
րում էր Կ. Պօլսի հայոց մէջ մասնաւորապէս և ընդ-
հանրապէս ամբողջ հայութեան մէջ։ Ամենքը միանգա-
մից կարծես աղատ չունչ տոին, տեսնելով գործե-
լու մի մեծ օրինակ, որը հայոց աշխարհի մութ
հօրիզոնում նկատեցնել էր տալիս ազատութեան ար-
շաւոյը։ Շանթահար՝ կառավարութիւնը նախ չիմացաւ
իր անկիւքը, սակայն ուշքի գալով, սկսաւ իր կատաղի
հալածումները։ Բայց և այնպէս հայոց ոգին չընկճվե-
ցաւ։ Հնօրհով մի շարք տէնօրական, բաղաքական ըս-
պանութիւնների, փառսերին, որ Յոյցից յետոյ միմեանց
յաջորդելով, միմեանց ետեւից նորանոր ցնցումներ ու
ողերաբլթիւն էին տալիս հայութեան և նորանոր հար-
ուածներ կառավարութեան։

«Յուլիս Տանեհինգի մեծ գէպը, — գրում էինք
մենք անցեալ տարի, — իր հանգամանքներով ու պայ-
մաններով չէ, որ այնչափ նշանաւոր է, որչափ նշա-
նաւոր է նրանով, որ հայերի մէջ նա առաջին յե-
ղափոխական զիտակցական շարժումն է հանդիսանում։
Նա եղաւ մեծ պատերազմի սկիզբը և դրանով նա
բացեց հայոց կեանքում մի նոր շրջան։ Նա իրե-
նով սկսաւ գործադրութեան ճանապարհի վրայ դը-
նել հայ ժողովրդի մեծ ու դրական ձգտումները։ Նա
ապացուցեց, որ այդ ձգտումների գործնական
յայտարարութեան ժամանակը հասել է...»

Բաւական չէ այդ, Հայութիւնը «Յուլիս Տանե-
հինգից սովորեց, թէ որպիսի եղանակներ են պէտք
գործնական ապէս ձգտելու համար գէպ իր բա-
րօրութիւնը...»

«Այն, ինչ որ տասնեակ տարիների հազար ու մի
քարոզներ անկարող եղան անելու, Յուլիս Տանե-
հինգը միանգամից կատարեց։ Այդ օրվան շարժումը յե-
ղափոխական մեծ պրօպագանդա էր, մեծ ագիտա-
ցիա էր գործով։ Այդ գործով արած պրօպագանդան,
այդ գործով արած ազդեցիկան, իրեն մեծ օրինակ,
այն արեց, որ հայ ժողովրդի մէջ դարձեց ինքնաճանաչու-
թիւն, նրա անկամ ոգին կենդանացրեց, նրա սիրտն ու
հոգին բորբոքեց, յեղափոխական ոգի ներշնչեց նրա մէջ,
յեղափոխական դրութիւն ստեղծեց հայոց կեանքում...»

Յուլիս Տասնհինգն այդ մեծ նշանակութիւնն ունենալով հայոց վերաբերութեամբ, ես նաեւ մի նոր մեծ զարկ տվեց հայկական խնդրին Արօպայի աչքում։ Ապացոյց դրան՝ բաւական է միայն թերթել եւրոպական բազմաթիւ թերթերի այն ժամանակայի համարները։

Բայց ի՞նչ. կառավարութեան, հայ պաշտօնական մարմինների, հայ մատենիչների հալածումներն ու տված նեղութիւնները՝ մի կողմից և հայ թուլասիրաների, որոնց մէջ նաեւ աղգային ջուլներ կան, տղեղ յայտնութիւնները՝ միւս կողմից, դժբաղդարար, ունեցան իրենց բացասական ազդեցութիւնը հայկական զանազան շրջանների վրայ, որ սկսան վհատութեան նշաններ ցոյց տալ, թէ ամեն բան այլ ևս վերջացած է։ Միամիտ չբժաններ. կարծում են թէ յեղափոխական շարժումը մէկ անմեղ խաղ է։ Իրենց պարզամտութեամբ նրանք չեն հասկանում, որ մէկ աղզի աղաւտութիւնը ձեռք բերելը նոյն այդ աղզին ենթարկում է սոսկալի ցնցումների, պաշտնջելով նրանից ո՛չ թէ ֆրազամայ բացականչութիւններ, այլ գրկանքներ, արիւն ու նահատակութիւններ։ Այնպէս թէ, որ իր այդ երկունքի սարսափելի տանջանքների ժամանակ կարող է լինի ցոյց տալ իր բարոյական մեծ ոյժը, կարող է լինի ամենագոյն բողոքներով յաղթել սուրբ պատերազմում իրեն հասած ամեն հարուածները և բարոյապէս անընկճելի դուրս գալ այդ ծանր բովից։ Այդպիսի աղգն արժանի է ապագայի և նա ունի ապագայ։

Մի երկու, երեք յեղափոխական շարժումները չեն, որ մեղ կը տան մեր ըզճացած աղատութիւնը, այլ մի երկայն շարք յեղափոխական շարժումներ, մէկը միւսից աւելի սոսկալի, մէկը միւսից աւելի արխնաշատ, մէկը միւսից աւելի խիստ շարժարանքների ու հալածումների պատճառ եղող։ Բայց և այդ արեան պաշտնջից է, բայց և այդ շարժարանքների սարսափելի տագնապներէ, որ կարող է ծագել, որ պէտք է ծագէ մեր աղատութեան արշալոյսը։ Այս միջոցին թուրախիտ վհատվածները շտապում են աղգային սուղը կրել իսկ երկշտաները ֆրազների սոփեստութեան քողի տակ պահ վել. մինչդեռ անտարբերները, մի առ ժամանակ վեր թառ Յուլիս Տասնհինգի ցնցումից, այսօր պատը բառաւում են իրենց նախկին թմրեցացիչ քնոյ մէջ կրկին ընկզմելու։ մինչդեռ ակաւանները, ուրախացած անկանների զիբրից, ազաւաբար պատառում են նրանց աղիքները և զուարթ կոկոռում մահաթոյր արծաշան գով. մինչդեռ թնամին էլ — հայ ու տաճիկ — կատար է իր հակառակութեամբ, — գոժողները թո՛ղ գործեն։ Արժէ՛, պէ՛տք է և անհրաժեշտ է գործել և գործելով թէկուզ մեռնել այն դրոշակի համար, որի վրայ արիւնոտ տառերով արձանագրված է Ճշմարտութեան, Աղատութեան ու Հաւասարութեան մեծ

սկզբունքը. — Ժողովրդի կատարեալ աղատութիւն ու բարօրութիւն. խրաքանչիւրին և ընդհանուրին հասարակ իրաւունքներ և հաւասար պարտականութիւններ. կործանումն ամեն տեսակ բռնութեան։ Եւ Յուլիս Տասնհինգի մեծ օրվայ տարեդարձի առթիւ տսենք այն նշանաւոր խօսքը, որ ֆրանսիացի հանճարեղ յեղափոխականն արտասանել է մէկ ամենալճառական բօւպէում. — «Թնամիները յաղթելու համար մեզ պէտք է ունենալ յանդգնութիւն, դարձեալ յանդգնութիւն, և միշտ յանդգնութիւն»։

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս Ե Բ Ա Ս Տ Ի Ո Յ Ն Ա Ն Գ Ի Ն .

Տնտեսական և հասարակական վիճակ
Հայոց .

(Շարունակութիւն «Հնչակի» թ. 9. ից և վերջ.)

Ժամանակէ մը ի վեր կը յերկրի վրաբայ մէջ Սամսոն Աբրահամի երկաթուղոյն շինութիւնն, որ անշուշտ տաճիկ տէրութիւնը իւր գանձուն սնանկութեան պատճառաւ պիտի յանձնէ եւրոպական մի ու է ընկերութեան։ Քաղաքիս կուսակալի թելադրութեամբ տեղոյն ինչպէս նաեւ Եւգոնիոյ թուրք և հայ խառն պաշտօնեաներէ մի հանրագիր ստորագրուեցաւ, կրկնուեցաւ և երեկնեցաւ, որք, այդ ստորագրողը, իրեն ի զիմաց երկրին ընդհ. ժողովրդիս, ժամ առաջ երկաթուղոյն շինութիւնը խնդրելէ վերջ կը խոստանան միանգամայն երկաթուղոյն շինութեան հարկ եղած գործաւորներն տալ ու ձրիաբար աշխատեցնել ինչպէս նաեւ հարկ եղած ձեռնտուութիւններն ու օգնութիւնները ընել նախնական հիւթերն հայթայթել, ճամբաներն հարթել և այլն և այլն. — խեղճ ժողովուրդ խաղալիք ու նշաւակ եղած է որպէս տալ չեղճ երկրին բռնութեանց հողմերուն ու ալիքներուն. —

Եօզլամայի և ինթիգալի տուրք (կալուածոց փոխանցման և քննելու տուրք). յայտնի է թէ կալուածոց սեփականողներու անուններն, ինչպէս նաեւ գինը ընդ արձանագրուած կըլլան կառավարութեան կալուածոց տաւարի մէջ և թէ կալուածատէրք նոյն արձանագրութեան պատճէնն եղող մի կալուածային մուրհակ (գոշան) ըստացած կըլլան որով վաւերացեալ կըլլայ կալուածատիրոջ ստացուածքն իրեն իւր սեփականութիւնը։ Այս ինթիգալի և եօզլամայի հաստատութեամբ տարուէ տարի քաղաքիս մէջ հողերը և վիճակաց գիւղերը պաշտօնեայք երթալով կտրուածները կը քննեն և և թէ տէրը մեռած է, նորա ժառանգորդներու կը փոխանցեն (ինթիգալ) և եթէ ոչ մուրհակը կը վաւերացուեն։ Այս փոխանցման տուրքը, եթէ կալուածը արդիւնաբեր հող է, 0 տու հազար է, իսկ եթէ բնակութիւն՝ 25 տու հազար։ Քաղաքացւոց կալուածներն միայն բնակարաններ ըլլալով, հոն չկան այնքան ընդարձակ աստարէզ ժողովուրդն կողոպտելու։ Իսկ գիւղացւոց կալուածներն բնակարաններէ դատ մշակելու հողեր ըլլալով գիւղացիք

են մանաւանդ որ դատաւարութեամբ են դարձեալ այդ մեծաքանակ տուրքերն տալ. և սակայն միայն տուրքն չէ որ զիւղացւոյն աղէտն կը նիւթէ. զիւղելը ուր բոլորքս ձայններն աւելի խեղդուած են քան ի քաղաքն, ուր մանաւանդ զիւղացիք երկրին օրինաց և լեզուին անտեղեակ, հոն է որ պաշտօնեայք կսկսին իրենց անպատկառ շահատակութիւնները. կը տեսնեն այդ պաշտօնեայք մի Թ և է ձեռնածոթեամբ, խարդախութեամբ, այնպէս կը ձեռնադրեն զիւղացւոյն թէ ներկայացուցած կաշուածա կան մուրհակը սխալ է, իրենն չէ այն, թէ տոմարին մէջ որ ըստ իրենց անխաբար և որչափ Վտրտնն, տարբեր անուան արձանագրուած է և միւս կողմէ հայ զիւղացւոյն թուրք գրողին կամ իւր աղջակահին ձեռքը տուած է պաշտօնեայն մի կողմ մուրհակ, նա ալ կը ներկայանայ և կսկսի պահանջել իւր վրայ արձանագրուելը. Բուն կաշուածատիրոջ չիտթութիւնն ու տաքնապ անմեկնելի կը դառնայ, չանթաւար եղած կը մթապնին աշխրդ, ծունկի բը կը կթոտին. ի՞նչ անել, մի քայլ ևս և ահա պիտի գրկուի հողերէն, մի ճար միայն կը մնայ, մի յոյս թնոթիւնն տուիլ տակ, -- անշուշտ անգործ են բոլոր այն պաշտօնեանքներն ու արքունիքներ, որով զիւղացիք կը ջանայ ի գտի շարժել բարացած սիրան այդ պաշտօնեայ. վաղ բին -- մի բան միայն, մի գերակ ոսկոր նետել նորա բնական Վերթաց զիւղացին իւր տան տաւարն, զատկաց ուտեստն, զաւակին շափ սիրելի անասնոց մի մասն ի վաճառ հանել, կամ վախառուէն՝ որ իրեն նախախնամութիւն նոյն պահուն իւր մօտն է և որ առանձն պատուհաս մը կը դառնայ, կը ճարէ կտրիկ գումար մը և կը սահեցունէ զայն պաշտօնէին ճանկը և յայնժամ միայն պաշտօնեայն կը հաճի զիւղացւոյն կաշուածն իրեն իրենն արձանագրելը. Սակայն հազուադէպ չէ՝ որ այսպիսի պարագայներուն շատ զիւղացիներ գրկուին հողերէն, երբ իրենց հակառակորդն քան զինքն աւելի կշտացուցած է պաշտօնեայն:

Այն սովորական տուրքերէն զանա, որ մեր արհեստաւորն և վաճառական կուտան իրեն շահուց տուրք, աւելոյս մնացործ է սնաֆն մի ուրիշ տուրք ևս ունի զէ. իհիւ անուամբ այսինքն իւրաքանչիւր մորթուած արջառի 4 դրշ, գոմէշի համար 5 դրշ, խաչանց համար 40 փր. և աւելի, գառի համար 20 փր. տուրք վճարելը. Այլ տուրք Տաճկաստանի ուրիշ քաղաքաց մէջ խիստ աննշան բան մ' է, այսինքն արջառաց համար 40 փր. և 10 փր. խաչանց համար. Տեղւոյս մնացործաց այս տուրքէն 45 - 50 հազար դրշ. ի տարեկան հասոյթ մը կը գոյանայ զոր քաղաքապետութիւնը կը գանձէ. Վերջերս նոյն մնացործ է սնաֆն, պատրիարքարանի միջոցաւ բողոքելի Պօլիս երկամական նախարարութեան այս անհատաւարութեան մասին, ուրիշ յայնժամ ի պատասխան այդ բողոքագրոյն բողոքեալ թէ այդ կարգի անհատաւարութիւն մը չկայ և թէ նոյն է այլ քաղաքաց հետ, վասն զի տեղւոյս քաղաքապետութեան նախագահն Նուրի պէյ իւր տարեկան հաշուեցոյցի մէջ այդ եկամուտն 100 - 150 ոսկոյ կը ներկայացունէ եղեր, մնացեալ մեծագոյն մասն ինքն կլլելով. Թէև յետոյ մնացործ է սնաֆն մի երկրորդ հանրագրով պարզեց, թէ ինչպէս այդ քաղաքապետն խարդախու

թեամբ իրենց քսակի հետ կը կողալտէ նաև արքունի գանձն, բայց այդ բողոք յետոյ անլսելի մնաց. մնացործը նոյն տուրքն կը վճարեն և Նուրի պէյ կը շարունակէ իւր պաշտօնը. Այլ ևս ընթերցողին կը թողունք մեր յաճախակի յերկրամ բանն մակարեւել հոս ևս՝ աստիճան աս աստիճան կաշառակերութիւնն:

Քանի որ տեղեկագրոյս այս համարովն տրոց վրայ կը խօսիմք, չ' մոռնամք նաև՝

Կէնդ տնաւ համարի և մեղուաւ համարի տուրքերն ալ, որ առ կաթնատու անասուն 3 և կէս դրշ. և փեթակ՝ 3 դրշ. է. Մեր երկրագործը դասն կգրադի նաև կենդանաբուծութեամբ և մեղուաբուծութեամբ, ինչպէս որ դատաւի լեռնապաշտայն գիրքն պարարտ արօքներ կընծայէ հօտերու. Կենդանահամարն կսկսի ձմեռուան վերջերս, ուր կենդանիք դեռ զարնան կանաչը ողջունած չեն մասնաւոր պաշտօնեայք զիւղերն իջնելով կենդանիներն համբելէ և տուրքերն ասելէ վերջ մի գոչան կուտան, որուն մէջ նշանակուած է զիւղացւոյն անասնոց թիւն ու վճարեալ գումարը. Պաշտօնեայք որ մի ներքին սե թելով կապուած են միմեանց, երբ մի գիւղի պաշտօնեայն մեկնի, մի քանի օր վերջ մի ուրիշ կուգայ և կուզէ համբել կենդանիները և որպէս թէ գոչանի մէջ նշանակուածէն աւելի գտած ըլլայ, կամ նոյն գոչանը խարդախեալ տուրքներով կրկին նոյնքան գումար մի, կրճելու ոսկոր մը խլելով կ'երթայ:

1891 մայիս 25.

Կոչնակ Սերապիոյ.

— . —

ՏԵԳԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ Թ Ի Ի Ր Ք Ա Յ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Յ. Լ ո ո ր և ր Մ ո ո չ Ի ց .

Պարնան հետ թշուառ Տարծոյ աշխարհին մէջ նարից սկսան հարստահարութիւնք, տառապանք, գէթ ձմեռ ա. տեն բնութեան հետ կը ննջեն մեր հարստահարիչք ևս, ձիւներու առատութիւն պաշտպանելով զմեզ նոցա զուլ մերուց, բայց զարնան էմէ կը զարթեն և սոված գոյ լերի նման կը յարձկին մեր վրայ. Էսպէս որ խօսիմ ձեզի Նուրի ձայն կուգայ, ձեր ականջներ վարժուած մեր լացերուն կոճերուն. մէկիկ - մէկիկ գէպեր որ պատմիմ պէքի խմանաք մեր միճակ:

Պարնան քիւրտեր մասն Մափնայ գիւղ (Մուշուց մէկ ժամ հեռու) Մաշէ Պառօյի տուն. իւր աղբիւր Յովնէ Պօլսից նոր էր եկեր. յիսուն մէճիտիէ ունէր. քիւրդեր կա սեն. քո աղբիւր բարով է եկեր Պօլսից, ուր է փարէն. բերես՝ կը բերես, թէ չէ կը կտրենք. կատեն ու զօրութե նով կանեն զյիսուն մէճիտիէն. էտով էլ չեն վերջացու. կով մը և եղ մ' լէ կանեն կը տանեն, տակէ ի դատ պղծու խաչելու մեծ պղինձ մի (կաթսայ) հինգ ոսկինոց և պղնձէ տաշտ մը երեք հարիւր գրուծոց. Հմշա թանկ բաներ գեղի մէջ մէկ էրկու մարդ միճակ կուենայ. մէկաշներ Լնոնցմէ կանեն կը գործածեն Պաղերը Աճառ նուկ զիւղի քիւրդերն են եղեր. Պատօ կերթայ կը բողոքէ հարմրթին. երկու մարդ լէ տաճիկ կերթան շահա տութիւն կիտան թէ իտա մայեր աս մարդերանց քովէ է.

բայց քուրդեր կուրանան . հուքմաթ թուռից ղէտոնք ա սեղով խալաթ չեղաւ :

Ասլըիլի մէջ Յունան գեղի (քաղաքից երկու ժամ հեռու) Աւտալ Պօղոսեանի չորս եղներ գիշեր ատեն քիւր գեր յարձկեալ կը տանեն . Աւտալ կը հեծնէ ձին , կիյնայ ետեւ . կը զարնեն ձիուց վար կը թաալեն , կը ծեծեն ու ղձին չէ կտանեն կերթան : Աւտալ հուքմաթին բողբոց , բայց « սուտ էք , գութ տաւլաթ խալիսի էք » ըսելով կը վռնտեն :

Արդերդ գիւղէն (չորս ժամ հեռու քաղաքից) Թորոսի եւ Մէոսի տաան ութ եղներ ցերեկ լստով ճիւղարանցի քրդեր առին տարան . Թորոսի Գրիգոր անուն աղէն էլ ղէմ դնելուն ապով սատարի կը ծեծեն եւ վերադարձելով կերթան : Գիւղացիք կերթան կը բողբոցեն մութէտարը՝ թին . ձիաւոր զաւթիւններ գրկեց աւազակներու ետեւ , բայց պարտալ դարձան . էնդին հայու մէկ թեթեւ յանցանք աւանց պտտիժ չի մնայ :

Մուշից չորս ժամ հեռու Աղձան գեղի Բարսեղի տան վրայ տաս . տասներկու Չալըններ (Չէրքէդք) յարձկելով կուղեն թալնել գիշեր ատեն . բայց տանաէր իմանալով զուրկներ հաւար (օգնութեան) կը կանչէ . գրկիցներ կը թափին , շալըններ կը փախնին : Բարսեղի աղէն Գաս պար ամէնից յառաջ կը նետուի ղչարագործներ հալածելու . էն ատեն շէրքէղներէ մէկը խուզուրդունով (կապալով գնտակով) կը զարկէ ղկարիճ աղէն ճակատէն եւ էն սաաթին կը մնան : Մենուդի ճանտաք (գիւհը) երեք օր արեւ կը մնայ մինչք որ հուքմաթ զապթիւս եւ քնիչ կը ղրկէ : Նոյն կուր ատեն հայեր կը յաջողին ղզարնող շէրքէղ բռնել եւ Մուշ բերելով կը յանձնեն տէրութիւնին . բայց շէրքէղ ինքեար կանէ ատելով թէ ես ճամբորդ մը էի . կառավարութիւն ղեւ մէկ տուած չէ . տեսներ ի՞նչ կեցին . պէլքիմ ղէն լէ կը թուեն :

Տէրքդ գիւղից (Աշախատ) ցորեկ լստով նախրի մի ջից տառք ձի քուրդեր առին տարան :

Գարձեալ Արդերդ գիւղից տաան երկու ձի առած ասրած են լուս ցորեկով նախրորդի առնից :

Գիւհէք որ սուլթանը քուրդ պէյեր ու աւազակներ Ասանալու բերելով նշան ու աստիճաններ տուեց եւ պատկաներ քրեց . սանքիմ էա նշաններ բաց ֆէրման էր թազաւորից ղհայեր տրանց ուղած կերպով թալնելու ու ժորթելու : Էտ անիրաւ աղաներ մեր Հայաստան երկիր յետ դարձած ատեն Պայպուրթի եւ Արդուուայ մէջտեղ կը հանգիւղին Մշեցի եւ Վանեցի հայ ճամբորդներու . իտարանք երկայն տարիներու . ղարիպութեան գինով եւ տրանց հալալ արունով ու քրտինքով շահած փարայով կիգային ուրանց աներ , ղուրանց քուլֆաթ ու ճծեր սրա խաղներու : Կուլթանի սիրած էտ անիրաւ անգութ քուրդեր կը յարձակին էտ խեղճերի վրայ եւ ղանոնց քովի փարէն , սիրահներ , սահաթ ու ամէն բան , մինչեւ ղաւաղաններ լէ ձեռքէն կտանեն կը թուռեն : Խեղճ հայեր Արդուուայ որ կը համին , վալուն կիմացուն , բայց ականջ չդնէ . ո՞վ կիլիւքնայ բան մ'առել սուլթանի բարեկամ էլընեաներուն : Հայեր շարէն կարած թեղեկաֆ կը քաշեն : Ասանալու թէ՛ ձի Գոլիս տարած ու նշան տուած պէյեր ղմեղ կը թալնեն : Պատասխան չկայ : Ողորմիկներէն

որ մէկն ակալու եւ անփառա հասած են ուրանց աներ . որ մէկ լէ դեռ հայրենիք չդարձած՝ կէս ճամբուց էմէլ պանդխտու . թեան են ելեր : Բեր ճիկար որ դիմանայ էս ցաւերուն :

Չուկ ղլիսից կը հոտի : Մեր վիւայաթ (Բաղէշ) քընց Մուշ լէ պէթէր է . ահա ձեզի լուր մ'լէ էն կողմերից որ թաժա (նոր) հասաւ մեր անկըճին : Այրալ գիւղ որ հաղիւ ութ ժամ հեռի է Բաղէշից , այդ գիւղի Սիմանի ընտանիքից կինը եւ իւր երկու աղջիկներ ղաւաղա լեւծ համիւններ կը ժողլէին . եօթ սիւահետրած քիւրդեր ղաղա նի պէս կինկան խարանց վրայ , շատ շարշարանք կը բանարարեն ղաղջիկներ ուրանց մօր աչքի առաջ : ղժբաղդ մայրը էրիկ մարդի բաջութեամբ կընդգիւմանայ ու կը կուրի անագործայ բրդերի ղէմ աղատելու վրա տաան ու հինգ տարեկան եւ տաան երեք տարեկան աղջիկներու կուսութիւններ . բայց խեղճ կինը անկարող կեցիւ աղաւանց ղիւր սիրական Նաղլուն ու Կիլիլըարն եւ ինք կը մեռնի հոն խանչալների հինգ հարսածների տակ : Էտա նահատակ կնկան անուն Անթառամ է :

Ահա մեր վիճակ աս է . բայց մեր գլուխ դեռ խելք չեկաւ . պաղիսին հրիայների պէս երկնուց կըստաէ որ քաղաքին նման աղատութիւն կիլնէ . պաղիսին խելի ղուց , Չինուաշուրից օգնութիւն կիլնէ . որ մէկ լէ յուսը կտրած ղուր գլուխ կանէ կերթայ կը նետուի սեւ պան ղըխտութեան գիրկ . մէկ ղուր աղբիւր չի մտածէ . ամէն մէկ իր ղլխուն ճար կիլնէ : Էտէմէլ ի՞նչ կեցին մեր հաւ . . . Ո՞ր կերթաք , աղբրտանք , ալխատանքի՞ , դատումի՞ : Հոտա ձգի քանց ղէնխէրով ղորձ կայ . հոտա կուրի կայ աղղի ա պով . հոտա մեռնի կայ մեր ղաւաղներանց եւ թոռներանց աղաւ եւ հանգիւստ ասրելու ու գրուն : Ո՞ր կը փախնիք , աղբրտանք , արի՞ կը թուռէք ղձեր քուլֆաթ , կնկալք , ճծեր , մալ , մուք , հողեր , արտեր , վանքեր , եկեղեցիներ , գերեզմաններ . . . Ո՞ր կերթաք , պարէ ձեր կնիկներուց ամէնքէք . . . Ամէն կողմ ղմեր գլուխ ղարկեցինք , շարէ չեղաւ . հաղ մ'լէ մոտիկ ընենք մեր երկտասարդ աղբրտանց որ ղիլի կը յորդորեն . արըր ղանակ սակորին է հասեր , էլ ինչի՞ց վախենանք . յի ղաւ փոխութիւն քանց ղաւ վիճակ ղժուար չէ խելի . հապա բռնենք ձեռք ձեռքի , թալնենք ղհրացան վեր մէր վէճին , ղրկենք ղկարմիր ղրօշակ եւ կանչենք . Կեցցէ՛ յեղափոխութիւն : Ասորնէ պալիս շարա մեղի չկայ ամենեկին : Յի ղաւաղութիւնով մենք կազատինք էտա ղուլմերուց եւ մեր երկիր լէ կարգ կանոն , արդարութիւն , աղատութիւն եւ հան ղըստութիւն կը տիրէ : Մենք ղմեր պարտք կատարելու ենք , բայց մի մոռնաք նաեւ որ

« Մենք եղբայրներ ունենք հոռի տեղերում ,
Նրանք մեր վրայ լիկ արտասուք են թալում ,
Նրանք մեզի թեւ ու թիկունք կը համին ,
Նուտով կուգան կը միանան սուրբ գործին ,
Մուշեղ .

Յօդուածներ , թղթակցութիւններ , տեղեկութիւններ
եւ ղրամ ու ղարկել հետեւեալ հասցեով .

Paris (France) . - M. Beniard . Poste restante .

Լօնդօն . Հայկական աղաւ տպարան .